Հաստատվել է ՀՀ վարչապետին
առընթեր ազգային երիտասարդական
քաղաքականության խորհրդի
19 հունիսի 2010թ. նիստի N 5 որոշմամբ

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման տողով նախատեսված հասարակական կազմակերպությունների դրամաշնորհային ծրագրերի հիմնական առաջնայնությունները (2010-2011 թվականների համար)

Ստորև ներկայացված են 2010-2011 թվականների համար ՀՀ պետական բյուջեով երիտասարդական պետական քաղաքականության ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման տողով հասարակական կազմակերպությունների համար նախատեսված դրամաշնորհային ծրագրերի հիմնական առաջնայնությունները: Առաջնայնությունների հիմքում ընկած են ՀՀ Կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 798 որոշմամբ հաստատված «Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգում», ՀՀ Կառավարության 2008թ. սեպտեմբերի 25-ի նիստի թիվ 39 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2008-2012 թվականների ռազմավարությունում և Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի 10.02.2010թ. նիստի N 14.3/31377-10 արձանագրության համապատասխան դրույթները:

<u>Հասարակական կազմակերպությունների դրամաշնորհային ծրագրերի հիմնական առաջնայնությունները՝</u>

1. Երիտասարդների մասնակցության խթանում

1.1 Համայնքային մակարդակներում երիտասարդական քաղաքականությունների մշակում և իրականացում,
1.2 Երիտասարդության հետ աշխատող ՀԿ-երի կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքների կազմակերպում,
1.3 Մարզերում երիտասարդական ծրագրերի իրականացում, մարզաբնակ երիտասարդների մասնակցության հնարավորությունների ընդլայնում,
1.4 Աջակցություն երիտասարդության միջազգային շարժունակությունը,
1.5 Երիտասարդական կամավորական աշխատանքի խթանում:

2. Երիտասարդության զբաղվածության խնդիրներ

2.1 Աջակցություն երիտասարդների աշխատանքային կողմնորոշմանը,
2.2 Աշխատանք գտնելու համար երիտասարդներին վերապատրաստման և խորհրդատվության ծառայությունների մատուցում,
2.3 Խոցելի խմբերի երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրներ:

3. Երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային, հայրենասիրական դաստիարակություն

3.1 Բանակ-հասարակություն կապի ամրապնդում,
3.2 Աջակցություն երիտասարդության բարոյահայրենասիրական դաստիարակության խնդիրների լուծմանը,
3.3 Հոգևոր և մշակութային խնդիրների վերաբերյալ երիտասարդության գիտելիքների և տեղեկացվածության մակարդակի բարձրացում:

4. Համահայկական և միջազգային երիտասարդական ծրագրեր

4.1 ԼՂՀ և ՀՀ երիտասարդական կազմակերպությունների համագործակցություն,
4.2 ԼՂՀ երիտասարդական կազմակերպությունների կարողությունների զարգացում,
4.3. Աջակցություն միջազգային երիտասարդական աշխատանքում ՀՀ երիտասարդական կազմակերպությունների մասնակցությանը,
4.4 Հայաստանի և սփյուռքի երիտասարդական կազմակերպությունների համագործակցություն՝ ուղղված սփյուռքում հայապահպանության խնդիրների լուծմանը և Հայաստան-սփյուռք գործակցության զարգացմանը,
4.5 Միջմշակութային ուսուցման եւ երկխոսության խթանում:

5. Երիտասարդական տեղեկատվություն և ուսումնասիրություններ

5.1. Երիտասարդական տեղեկատվության տարածման գործիքների զարգացում,
5.2. Երիտասարդական խորհրդատվության ծառայությունների զարգացում,
5.3. Երիտասարդական ուսումնասիրությունների իրականացում: